ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2 մարտի 2012թ. թիվ 76

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի “Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին” թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի փետրվարի 23-ի “Անհատույց օգտագործման իրավունքով գույք ամրացնելու մասին” N 192-Ա որոշման 2-րդ կետը՝

Կ ա ր գ ա դ ր ու մ ե մ.

1. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի հաշվեկշռում հաշվառված ու «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակի Դ. Տեր-Սիմոնյանի անվան N 2 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանն ամրացված՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ քաղաքի Ս. Ավետիսյան հասցեում գտնվող ուսումնական մասնաշենքը, կաթսայատունը և պետական սեփականություն հանդիսացող 0.95 հեկտար մակերեսով հողատարածքը հետ վերցնելու և անժամկետ ու անհատույց օգտագործման իրավունքով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Սպիտակի պետա-կան քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը հանձնելու հետ կապված հանձնման-ընդունման աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու նպատակով ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2. Սույն կարգադրության կատարման հսկողությունը դնել մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Մ.Սայադյանի վրա:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2012թ. մարտի 2
ք.Վանաձոր